ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 08.10.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/84

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, քննելով «Նաիրի Ինշուրանս» Ապահովագրական ՍՊԸ-ի կողմից 25.09.2018թ. ներկայացված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2018/84 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. «Նաիրի Ինշուրանս» Ապահովագրական ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Նաիրի Ինշուրանս» Ապահովագրական ՍՊԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) 25.09.2018թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ Ընկերությունն ուսումնասիրելով՝ «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Պատվիրատու) կարիքների համար «Առողջության ապահովագրության ծառայության» ձեռքբերման նպատակով հայտարարված բաց մրցույթի թիվ «ՀԱՊՀ-ԳՀԾՁԲ-18/6» ծածկագրով

հրավերի (այսուհետ՝ Հրավեր) մի շարք դրույթներ, բացահայտել է, որ դրանցում առկա են «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) խախտումներ, որոնք հանգեցրել են Ընկերության իրավունքների և օրինական շահերի ոտնահարմանը, մասնավորապես.

«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի կարիքների համար «Առողջության ապահովագրության ծառայության» ձեռքբերման նպատակով հայտարարվել է բաց մրցույթ թիվ «ՀԱՊՀ-ԳՀԾՁԲ-18/6» ծածկագրով (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որի իրականացման համար սահմանված կարգով հաստատված Հրավերը, մասնավորապես՝ դրա տեխնիկական բնութագրի հատվածը, որում ներառված են Ընթացակարգի մասնակիցների նկատմամբ առաջադրվող վավերապայմանները, հակասում է Օրենքի դրույթների պահանջներին և անուղղակիորեն հանգեցնում Ընկերության շահերի ոտնահարմանը:

Այսպես՝ համաձայն Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ չեն կարող սահմանվել մասնակցի՝ գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման հետ կապված այնպիսի չափանիշներ, որոնք՝

1) նախատեսված չեն սույն հոդվածով.

2) խտրական են և սահմանափակում են մրցակցությունը՝ անհիմն կերպով բարդացնում կամ պարզեցնում են հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին.

3) համարժեք չեն՝ ուղղակիորեն չեն բխում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման անհրաժեշտությունից:

Վերը նշված դրույթի վերլուծությունից ուղղակիորեն բխում է, որ Հրավերում չեն կարող պարունակվել այնպիսի դրույթներ, որոնք կսահմանափակեն այս կամ այն մասնակցի մրցունակությունը, դրանք չեն կարող լինել խտրական և չեն կարող ներկայացնել հնարավոր մասնակիցներին ուղղված այնպիսի պահանջներ, որոնք կպարզեցնեն կամ կբարդացնեն գործընթացը, ինչպես նաև՝ անուղղակիորեն կզրկեն ոլորտում առկա լիցենզավորված սուբյեկտներին գնման գործընթացին մասնակից լինելու իրավական հնարավորությունից: Ավելին, գնման գործընթացում հրավերի պայմանները չեն կարող լինել անհամարժեք և ուղղակիորեն չբխել պարտավորությունների կատարման անհրաժեշտությունից:

Վերլուծելով Հրավերի պահանջները՝ պարզ է դառնում, որ Հրավերի Պայմանագրի Հավելված 1.2-ով սահմանվում է այն բժշկական հաստատությունների ցանկը, որոնց հետ պարտադիր համագործակցության պայմաններում միայն մրցույթի մասնակիցը կարող է մրցունակ համարվել Հրավերի շրջանակներում: Ավելին, ուշագրավ է, որ Հրավերի Պայմանագրի Հավելված 1.1-ի աղյուսակի վերջին «Համագործակցող բժշկական ծառայություններ» հատվածի համաձայն՝ «Պատվիրատուի պահանջով Կատարողը պարտավորվում է ներկայացնել հավելված 1-ում նշված բուժհաստատությունների կողմից վավերացված տեղեկանքներ, որոնք կհավաստեն Կատարողի հետ կնքված և գործող համագործակցության պայմանագրերի առկայությունը՝ նշելով համագործակցության պայմանագրերի համարները: Համագործակցության պայմանագրերը պետք է վերաբերեն կամավոր բժշկական ապահովագրության պայմանագրերի ներքո ապահովագրված անձանց սպասարկմանը, այլ ոչ թե ՀՀ կառավարության 915-Ն որոշման համաձայն՝ սոցիալական փաթեթի շահառուների սպասարկմանը, որի կապակցությամբ 2017 թվականի հոկտեմբերի 1-ից բոլոր ապահովագրական ընկերությունները կնքել են ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ պայմանագրեր:

Մյուս կողմից, նույն հատվածի հաջորդ պարբերությամբ նշված է. «Ապահովագրված անձն իրավունք ունի սպասարկվելու Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության տարածքում գործող ցանկացած լիցենզավորված բժշկական հաստատությունում: Այն դեպքում, երբ Ապահովագրված անձը դիմում է այլ բժշկական հաստատություն, որը ներառված չէ վերոնշյալ ցանկում, ապա ապահովագրական հատուցման կարգավորման համար անհրաժեշտ փաստաթղթերի հավաքագրումը, ներկայացումն Ապահովագրողին, ինչպես նաև բուժծառայությունների դիմաց վճարումն իրականացվում է Ապահովագրված անձի կողմից, որից հետո հայտի կարգավորումը իրականացվում է համաձայն «Հայտերի կարգավորման ընթացակարգի», իսկ Հրավերի մաս կազմող Կարգավորման ընթացակարգի սխեմատիկ պատկերի համաձայն՝ գրանցված հայտի գծով բժիշկ-փորձագետի կողմից գրանցված հետադարձ զանգին հաջորդում է կա՛մ անվճար բուժսպասարկումը, կա՛մ հետագա հատուցմամբ սպասարկումը ցանկացած բուժհաստատությունում:

Ստացվում է, որ Հրավերում առկա են միմյանց հակասող պահանջներ: Պահանջներից մեկը սահմանափակում է այս կամ այն մասնակցին՝ սահմանելով կոնկրետ բժշկական կենտրոնների հետ համագործակցության պարտադիր պահանջ, մյուսը՝ սահմանում է, որ ապահովագրված անձը կարող է սպասարկվել ցանկացած բուժհաստատություն: Ավելին, հատկանշական է, որ Հրավերի Պայմանագրի Հավելված 1.2.-ում նշված բժշկական կենտրոնների հետ պարտադիր համագործակցության պայմանը պայմանավորված չէ մատուցվող ծառայությունների որակով, կամ որևէ այլ հանգամանքով, և կրում է ձևական բնույթ: Այսինքն՝ նշված պայմանը պայմանավորված չէ պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման անհրաժեշտությամբ և չի բխում դրանից, քանի որ սահմանելով համագործակցող բժշկական հաստատությունների ցանկ՝ որևիցե մեկը չի կարող երաշխավորել մատուցվող ծառայությունների որակական էական տարբերություն նույն լիցենզիա ունեցող այլ բժշկական կենտրոնների կողմից մատուցվող ծառայությունների համեմատությամբ, քանի որ բժշկական կենտրոնները բոլոր լիցենզավորվում են միևնույն մարմնի կողմից և օրինաչափ է դրանց որակական համարժեք և համանման աստիճանը:

Ավելին, Պատվիրատուի կողմից չափանիշների սահմանման մեջ այնքանով է խտրական մոտեցումն արտահայտիչ, որ պայմանագրային հիմունքով համագործակցող բուժհաստատությունների չափանիշներ սահմանվելիս նշվել են կոնկրետ սուբյեկտների անուններ, որոնց հետ համագործակցություն հնարավոր է ունենա միայն մեկ ապահովագրական ընկերություն, իսկ տվյալ սուբյեկտի կամարտահայտությունից էլ կախված հնարավոր է արհեստականորեն խոչընդոտ ստեղծել և մյուս ապահովագրական ընկերության հետ տվյալ սուբյեկտը ընդհանրապես չցանկանա կնքել համագործակցության պայմանգիր, քանի որ համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսդրության հիմնարար սկզբունքների՝ գործում է պայմանագրի կնքման ազատության սկզբունքը, որը լիիրավ հնարավորություն է տալիս քաղ. շրջանառության ցանկացած սուբյեկտի հրաժարվել այս կամ այն սուբյեկտի հետ հաստատել պայմանագրային իրավահարաբերություն:

Վերոնշյալի հիման վրա՝ Հրավերն ինքնին առաջացնում է մրցակցության խաթարում. չէ՞ որ գնումների գործընթացի կազմակերպման բուն նպատակն է մրցույթի

մասնակիցների համար մասնակցության հավասար պայմանների ստեղծումը, որի արդյունքում հաղթող է ճանաչվում որակական կամ գնային առավել փոխշահավետ առաջարկ ներկայացրած մասնակիցը: Տվյալ իրավիճակում գործ ունենք հայտարարված այնպիսի մրցույթի հետ, որն անուղղակիորեն ոչ միայն սահմանափակում է մասնակիցների մրցունակությունը, այլ նաև՝ Օրենքով արգելված ձևական խոչընդոտներ է առաջացնում գործընթացի՝ սահմանված կարգով կազմակերպման և անցկացման համար, ինչպես նաև՝ դրանում առկա հակասությունների ուժով հնարավոր մասնակիցներին գցում է մոլորության մեջ:

Օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն>>:

Համաձայն Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի՝ չեն կարող սահմանվել մասնակցի՝ գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման հետ կապված այնպիսի չափանիշներ, որոնք՝

1) նախատեսված չեն սույն հոդվածով.

2) խտրական են և սահմանափակում են մրցակցությունը՝ անհիմն կերպով բարդացնում կամ պարզեցնում են հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին.

3) համարժեք չեն՝ ուղղակիորեն չեն բխում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման անհրաժեշտությունից:

Վերոնշյալից բխում է, որ Հրավերի դրույթները հակասում են նաև գնումների գործընթացի կազմակերպման հիմնարար սկզբունքներին և պահանջներին:

Ընկերությունը վկայակոչել է Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը, 50-րդ հոդվածի 7-րդ և 9-րդ մասերը, 51-րդ հոդվածի 1-ին մասը:

Ընկերությունը բողոքով խնդրել է պարտավորեցնել «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամ կարիքների համար առողջության ապահովագրման ծառայության ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀԱՊՀ-ԳՀԾՁԲ-18/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընթացակարգը հայտարարել չկայացած:

«Նաիրի Ինշուրանս» Ապահովագրական ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 28.09.2018թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը, ինչպես նաև փոփոխել բողոքով ներկայացված պահանջը՝ վերաձևակերպելով հետևյալ կերպ. պարտավորեցնել ընթացակարգի գնահատող հանձնաժողովին փոփոխել հրավերի տեխնիկական բնութագիրը:

2. «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 27.09.2018թ. թիվ 01/12/1701-18 գրությամբ «Նաիրի Ինշուրանս» Ապահովագրական ՍՊԸ-ի բողոքի վերաբերյալ հայտնել է, որ բողոքն անհիմն է և մերժման ենթակա՝ ստորև ներկայացվող հիմնավորումներով.

Մեջբերելով «Գնումների մասին»ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթները՝ բողոքաբերը սխալ է մեկնաբանել հոդվածի դրույթները և կատարել է դրանցից չբխող եզրահանգում՝ նշելով, թե գնման գործընթացում հրավերի պայմանները չեն կարող լինել անհամարժեք և ուղղակիորեն չբխել պարատավորությունների կատարման ահրաժեշտությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝

« (...) 3. Մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.

2) մասնագիտական փորձառություն.

3) տեխնիկական միջոցներ.

4) ֆինանսական միջոցներ.

5) աշխատանքային ռեսուրսներ:

4. Չեն կարող սահմանվել մասնակցի՝ գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման հետ կապված այնպիսի չափանիշներ, որոնք՝

1) նախատեսված չեն սույն հոդվածով.

2) խտրական են և սահմանափակում են մրցակցությունը՝ անհիմն կերպով բարդացնում կամ պարզեցնում են հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին.

3) համարժեք չեն՝ ուղղակիորեն չեն բխում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման անհրաժեշտությունից:

(...)

6. Հրավերով սահմանվում են մասնակցի՝ տվյալ գնումներին մասնակցելու իրավունքը և որակավորումը գնահատելու չափանիշները, կարգը և դրա համար պահանջվող փաստաթղթերին (տեղեկություններին) ներկայացվող պահանջները:

Բողոքաբերի կողմից մեջբերված «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթները համակարգային վերլուծության ենթարկելով նույն հոդվածի 1-ին և 3-րդ մասերի կարգավորումների հետ, կարելի է հիմնավոր եզրակացություն անել, որ Օրենսդիրը այդ կերպ սահմանել է հնարավոր մասնակցին առաջադրվող մասնակցության չափանիշի և որակավորման հետ կապված չափանիշների սպառիչ ցանկ, որը նախատեսված է նույն հոդվածի 1-ին և 3-րդ մասերով, միաժամանակ նույն հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով սահմանել է, որ չեն կարող սահմանվել մասնակցի՝ գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման հետ կապված այնպիսի չափանիշներ, որոնք՝ նախատեսված չեն սույն հոդվածով, սույն հոդվածի տակ օրենսդիրը նկատի է ունեցել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման հետ կապված չափանիշները:

Մինչդեռ, «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի կարիքների համար «Առողջության ապահովագրության ծառայության» ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀԱՊՀ-ԳՀԾՁԲ-18/6» ծածկագրով Հրավերի որևէ կետով նախատեսված չէ գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման հետ կապված այնպիսի չափանիշ, որը նախատեսված չէ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով, և որով իսկ կխախտվեր Բողոքաբերի կողմից նշված 6-րդ հոդվածի 4-րդ կետը: Ասվածը հիմնավորվում է նաև նրանով, որ բողոքաբերը իր դիմում ևս չի նշել գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման սահմանափակման հետ կապված Հրավերում առկա որևէ չափանիշ:

Իր հերթին այն փաստը միայն, որ հրավերը սահմանում է որոշակի չափորոշիչներ՝ չի կարող դիտվել խտրականության, մրցակցության անհիմն սահմանափակման կամ իրավահավասարության խախտման դրսևորում, քանի որ խտրականությունն ու իրավահավասարության սկզբունքի խախտումն առկա են այն դեպքում, երբ սահմանված չափորոշիչներին բավարարող սուբյեկտներից մեկը զրկվում է մասնակցությունից, մինչդեռ մնացածը՝ ոչ, հետևաբար «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի խախտում ՀԱՊՀ հիմնադրամի կողմից թույլ չի տրվել: Այլ կերպ՝ խտրականության առկայությունը կարելի է քննարկել, օրինակ, այն դեպքում, երբ ներկայացված լինի խնդրո առարկա հրավերին բավարարող 2 հայտ, և այդ անձանց նկատմամբ դրսևորվի տարբեր մոտեցում:

Ըստ երևույթի բողոքաբերը իր բողոքում նկատի է ունեցել Պատվիրատուի կողմից գնման առարկայի բնութագրին ներկայացվող սահմանված չափանիշների չպահպանված լինելուն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝

1. Սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝ 2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

Այսպիսով Պատվիրատուն նշել է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքը որպես նպատակ է հռչակում Պատվիրատուին սեփական կարիքներին համապատասխան ապրանքի, աշխատանքի կամ ծեռքբերման հնարավորության ապահովումը, հետևաբար ՀԱՊՀ հիմնադրամը, կարիք ունենալով ձեռք բերել կամավոր բժշկական ապահովագրություն՝ առանց բժշկական ծառայության համար նախապես վճարելու պայմանի, սահմանել է իր պահանջները հրավերում՝ դրանց բավարարող մասնակիցներին չզրկելով մասնակցության հայտ ներկայացնելու հնարավորությունից:

Ընդ որում, հրավերով սահմանված չափորոշիչները համապատասխանեցվում են Պատվիրատուի պահանջներին (կարիքներին), և Պատվիրատուի կարիքների բավարարման համար անհրաժեշտ պահանջները միանշանակորեն կարող են պարունակել նաև այնպիսի պայմաններ, որոնք անհրաժեշտ որակական հատկություններով ու ռեսուրսներով չօժտված սուբյեկտների համար կարող են բարդացնել մրցույթին մասնակցելու հնարավորությունը:

Ուստի Պատվիրատուն մրցույթի անցկացման հրավերը կազմելիս ազատ է դրանում ներառելու այն բոլոր պահանջները, որոնք անհրաժեշտ են իր կարիքների բավարարման համար՝ պայմանով, որ դրանք զերծ լինեն խտրականությունից և անհիմն

սահմանափակումներից, ինչպես և սույն դեպքում վարվել է Պատվիրատուն՝ ՀԱՊՀ հիմնադրամը:

ՀԱՊՀ հիմնադրամի աշխատակիցները սոցփաթեթի շահառուներ չեն հանդիսանում, և կազմակերպված մրցույթով ձեռք է բերվելու բժշկական կամավոր ապահովագրություն, որի համար անհրաժեշտ վճարման 40 տոկոսը կատարվելու է ապահովագրվող անձի կողմից, հետևաբար հրավերում ներառված պահանջները բխում են նաև այն անձանց պահանջմունքներից, ովքեր հանդիսանում են ձեռք բերվելիք ապահովագրության պոտենցիալ շահառուներ:

Ինչ վերաբերում է բողոքաբերի կողմից հրավերում հայտնաբերված կարծեցյալ հակասություններին, ապա Պատվիրատուն նշել է, որ Հրավերի հավելված 1.1-ում առկա բժշկական հաստատությունները նշված են ծառայությունների առավելագույն ծածկույթ ապահովելու նպատակով և հանդիսանում են այն նվազագույն չափանիշը, որին մասնակիցը պետք է բավարարի, ինչը սակայն չի նշանակում, որ ապահովագրված անձինք կարող են բժշկական օգնություն ստանալ միայն թվարկված հաստատություններում:

Հրավերի պայմաններն առավել հանգամանալից ուսումնասիրելու դեպքում ակնհայտ է, որ ապահովագրված անձն իրավունք ունի բժշկական ծառայություններ ստանալ ցանկացած հաստատությունում, իսկ հավելվածում նախատեսված և չնախատեսված հաստատություններում մատուցվող ծառայությունների միակ տարբերությունը կայանում է վճարման կարգի մեջ. մի դեպքում անձը բժշկական օգնություն է ստանում առանց նախապես վճարելու, իսկ մնացած՝ հավելվածով չնախատեսված դեպքերում վճարումը կատարում է կանխիկ, իսկ հատուցումը ստանում հետո՝ ապահովագրական հատուցման հայտի հիման վրա:

Միարժեք է, որ հրավերը հակասական դրույթներ չի պարունակում, քանի որ հնարավորություն է ընձեռում բժշկական օգնություն ստանալ բոլոր հաստատություններում՝ որոշակի առանձնահատկություններ սահմանելով վճարման կարգի շուրջ, իսկ բժշկական հաստատությունների ընտրությունն ուղղված է եղել շահառուների՝ բժշկական ծառայություններ ստանալու իրավունքի մատչելիության ապահովմանը:

Վերոգրյալի հաշվառմամբ Պատվիրատուն գտնում է, որ ներկայացված բողոքի փաստարկները չեն ծառայում Պատվիրատուին վերագրվող խախտումների առկայությունը հիմնավորելու՝ բողոք բերող անձի հետապնդած նպատակին, հետևաբար բացակայում են բողոքը բավարարելու հիմքերը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Պատվիրատուն խնդրել է «Նաիրի ինշուրանս» ԱՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը մերժել:

«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 28.09.2018թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. ԳԲԽ-ԱՄ-2018/84 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-ԱՄ-2018/84 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի կողմից «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի կարիքների համար առողջության ապահովագրման ծառայության ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԱՊՀ-ԳՀԾՁԲ-18/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որի տեխնիկական բնութագրում նախատեսվել է այն բժշկական հաստատությունների նվազագույն ցանկը, որոնց հետ մասնակիցը պետք է ունենա համագործակցության պայմանագրեր:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միհեր Անանյանս, ուսումնասիրելով «Նաիրի Ինշուրանս» Ապահովագրական ՍՊԸ-ի 25.09.2018թ. բողոքը, «Հայաստանի

ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի 27.09.2018թ. թիվ 01/12/1701-18 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝

1. Սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի կողմից «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի կարիքների համար առողջության ապահովագրման ծառայության ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԱՊՀ-ԳՀԾՁԲ-18/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ,

որի հրավերի պայմանագրի նախագծի հավելված 1 տեխնիկական բնութագրում նախատեսվել է հետևյալ պայմանը.

Համագործակցող բժշկական հաստատություններ	Անհրաժեշտ բուժհաստատությունների անվանումները (նվազագույն քանակը տես հավելված 1-ում), որոնց հետ կազմակերպությունն աշխատում է կամավոր բժշկական ապահովագրության պայմանագրային հիմունքներով: Հավելված 1.2-ում նշված բուժհաստատություններում ապահովագրված անձը հատուցման ենթակա բժշկական ծառայություններից օգտվում է առանց նախնական վճարի: Պատվիրատուի պահանջով Կատարողը պարտավորվում է ներկայացնել հավելված 1-ում նշված բուժհաստատությունների կողմից վավերացված տեղեկանքներ, որոնք կհավաստեն Կատարողի հետ կնքված և գործող համագործակցության պայմանագրերի առկայությունը՝ նշելով համագործակցության պայմանագրերի համարները: Համագործակցության պայմանագրերը պետք է վերաբերեն կամավոր բժշկական ապահովագրության պայմանագրերի ներքո ապահովագրված անձանց սպասարկմանը, այլ ոչ թե ՀՀ կառավարության 915-Ն որոշման համաձայն՝ սոցիալական փաթեթի շահառուների սպասարկմանը, որի կապակցությամբ 2017 թվականի հոկտեմբերի 1-ից բոլոր ապահովագրական ընկերությունները կնքել են ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ պայմանագրեր: Ապահովագրված անձն իրավունք ունի սպասարկվելու Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության տարածքում գործող ցանկացած լիցենզավորված բժշկական հաստատությունում: Այն դեպքում, երբ Ապահովագրված անձը դիմում է այլ Բժշկական հաստատություն, որը ներառված չէ վերոնշյալ ցանկում, ապա ապահովագրական հատուցման կարգավորման համար անհրաժեշտ փաստաթղթերի հավաքագրումը, ներկայացումն Ապահովագրողին, ինչպես նաև բուժծառայությունների դիմաց վճարումն իրականացվում է Ապահովագրված անձի կողմից, որից հետո հայտի կարգավորումը իրականացվում է համաձայն «Հայտերի կարգավորման ընթացակարգի»:

Ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծի թիվ 1.2 հավելվածով նախատեսվել է անհրաժեշտ բուժհաստատությունների ցանկ՝ հստակ անվանումներով, ըստ բժշկական օգնության և սպասարկման համապատասխան ուղղությունների և տարածաշրջանների, որոնց հետ մասնակիցը պետք է ունենա համագործակցության պայմանագրեր:

Երևան	
1.	«Նաիրի» Բժշկական Կենտրոն

2.	«Սիրմեդ» Բժշկական Կենտրոն
3.	«Էրեբունի» Բժշկական Կենտրոն
4.	«Աստղիկ» Բժշկական Կենտրոն
5.	«Հերացի» №1 Հիվանդանոցային Համալիր (Երևանի Մխիթար Հերացու Անվան Պետական Բժշկական Համալսարանի)
6.	Բեգլարյան Կենտրոն
7.	«Արաբկիր» Բժշկական Համալիր /Երեխաների և Դեռահասների Առողջության Ինստիտուտ/
8.	«Քանաքեռ-Զեյթուն» Բժշկական Կենտրոն
9.	«Նորք-Մարաշ» Բժշկական Կենտրոն
10.	«Արմենիա» Հանրապետական Բժշկական Կենտրոն
11.	«Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» Բժշկական Կենտրոն
12.	«Իզմիրլյան» Բժկական Կենտրոն
13.	«Սլավմեդ» Բժկական Կենտրոն
14.	Միքայելյան Վիրաբուժության Կենտրոն
15.	«Վիկմեդ» Բժշկական Կենտրոն
16.	Ժամանակակից Վիրաբուժության Կլինիկա
17.	«Առիգ-Մեդ» Բժշկական Կենտրոն
18.	Ֆանարջյանի անվան Ուռուցքաբանական Կենտրոն
19.	Սրտաբանության գիտահետազոտական ինստիտուտ
20.	«Ավանգարդ Մեդ» Բժշկական Կենտրոն
21.	«Ուիգմոր Քլինիք» Բժշկական Կենտրոն
22.	«Մեդէքսպրեսս» Բժշկական Կենտրոն
23.	«Սանուս վիտա» Բժշկական Կենտրոն
24.	«Մեփլ Լիֆս» Հայ-Կանադական Բժշկական Կլինիկա
25.	Հայ Ամերիկյան Առողջության Կենտրոն
26.	«ԱՐԹՄԵԴ» Բժշկական Վերականգնողական Կենտրոն
27.	«Աքսիոմեդ» Վնասվածքաբանական-Վերականգնողական Կլինիկա
28.	Մալայանի անվան Ակնաբուժական Կենտրոն
29.	«Օպտոմեդ» Հայ-Կանադական Ակնաբուժական Կենտրոն
30.	8-րդ Քաղաքային Պոլիկլինիկա

31.	«ԿՀՄԻ ԲԱԿ-Երևան» Ախտորոշիչ Կենտրոն
32.	«Վիտալայն» Բժշկական և Լաբորատոր-Ախտորոշիչ Կենտրոն
33.	«Դիալաբ» Կլինիկական Ախտորոշիչ Լաբորատորիա
34.	«Ավանտա» Նորարարական Բժշկական Կենտրոն
35.	«Սամվել Սարգսյան և գործընկերներ» ՍՊԸ
36.	«Կամար» Ատամնաբուժական Կլինիկա («Սմարթդենտ» ՍՊԸ)
37.	«Արտ Կլասիկ դենտ» Ատամնաբուժական Կենտրոն
38.	«Հեփի Սմայլ» Ատամնաբուժական Կենտրոն
39.	«Հեփի Սմայլ» Ատամնաբուժական Կենտրոն «Մեդլօր» Ատամնաբուժական Կենտրոն
40.	«Ագաթ դենթլ» Ատամնաբուժական Կենտրոն
41.	«Պրոգրես Գրուպ» («Նորդ ԿՍ» Գեղեցկության Ակադեմիա և Ատամնաբուժական Կենտրոն)
42.	«Էյ Ջի Էյջ Լաբորատորի» Ատամնաբուժական Կենտրոն
43.	«Վան» Ատամնաբուժական Կենտրոն
Արմավիր	
44.	Վաղարշապատի Բժշկական Կենտրոն
45.	Մեծամորի Բժշկական Կենտրոն
Լոռի	
46.	Ստեփանավանի Բժշկական Կենտրոն
47.	Վանաձորի Բժշկական Կենտրոն
48.	Սպիտակի Բժշկական Կենտրոն
49.	Ալավերդու Բժշկական Կենտրոն
50.	Ստեփանավանի Ստոմատոլոգիական Պոլիկլինիկա
51.	«Վանմեդ» Բժշկա-Ստոմատոլոգիական Կենտրոն
52.	Ալավերդու Ստոմատոլոգիական Պոլիկլինիկա
Սյունիք	
53.	Կապանի Բժշկական Կենտրոն
54.	Գորիսի Բժշկական Կենտրոն
55.	«Վովադենտ» Ատամնաբուժական Կենտրոն

Շիրակ	
56.	Գյումրու Բժշկական Կենտրոն
57.	Ախուրյանի Բժշկական Կենտրոն
58.	«Ստոմա-Ստիլ» Ատամնաբուժական Կենտրոն
ԱՀ	
59.	ԱՆ Հանրապետական Բժշկական Կենտրոն

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) ***գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.***

2) պայմանագրի կնքման նպատակով ***մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.***

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ***գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:***

Ուսումնասիրելով «ՀԱՊՀ-ԳՀԾՁԲ-18/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծի հավելված 1 տեխնիկական բնութագրի «Համագործակցող բժշկական հաստատություններ» բաժնով նախատեսված պայմանը՝ հստակ բժշկական հաստատությունների հետ համագործակցության պայմանագրեր ունենալու վերաբերյալ, գտնում եմ, որ նման պայմանը կարող է սահմանափակել Ընթացակարգի մասնակիցների շրջանակը և արհեստական խոչընդոտներ ստեղծել մասնակիցների՝ գնման գործընթացին մասնակցելու իրավունքից և գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարությունից օգտվելու համար: Մասնավորապես՝ գնման նպատակը Պատվիրատուի կարիքների համար առողջության ապահովագրման որակյալ ծառայությունների ձեռքբերումն է, ուստի կոնկրետ բժշկական հաստատությունների հետ համագործակցության պայմանագրերի առկայության պահանջի սահմանումը էական չի կարող դիտարկվել առողջության ապահովագրման ծառայության որակյալ լինելու հանգամանքն ապահովելու գործում: Մինչդեռ հրավերի համաձայն, եթե մասնակիցը չունի

համագործակցության պայմանագիր Հրավերում նշված թեկուզև մեկ բժշկական հաստատության հետ, սակայն ունի մի շարք պայմանագրեր այլ, ավելի լայն շրջանակի բժշկական հաստատությունների հետ, ապա վերջինս կզրկվի գնման գործընթացին մասնակցելու հնարավորությունից:

Դրա հետ մեկտեղ Հրավերը նախատեսում է նաև, որ ապահովագրված անձն իրավունք ունի սպասարկվելու Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության տարածքում գործող ցանկացած լիցենզավորված բժշկական հաստատությունում, այդ թվում նաև՝ այն բժշկական հաստատություններում, որոնք ներառված չեն վերոհիշյալ ցանկում: Նման պայմաններում, երբ ապահովագրված անձն իրավունք ունի սպասարկվելու նաև այդ ցանկի մեջ չմտնող բժշկական հաստատությունում, որի դեպքում նույնպես գործում է ապահովագրական հատուցումը, համագործակցող բժշկական հաստատությունների հստակ ցանկի սահմանումը կարող է հանգեցնել մրցակցության խրախուսման, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության, մասնակիցների շրջանակի ընդլայնման և մի շարք այլ սկզբունքների խախտմանը:

Միևնույն ժամանակ գտնում եմ, որ համագործակցող բժշկական հաստատությունների անվանումների հստակ սահմանման փոխարեն անհրաժեշտ է ըստ ծառայության համապատասխան ուղղությունների և ըստ տարածաշրջանների նախատեսել համագործակցող բժշկական հաստատությունների նվազագույն քանակները:

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը, գտնում եմ, որ «Նաիրի Ինշուրանս» Ապահովագրական ՍՊԸ-ի բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Նաիրի Ինշուրանս» Ապահովագրական ՍՊԸ-ի կողմից 25.09.2018թ. ներկայացված բողոքը բավարարել.

պարտավորեցնել «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի կարիքների համար առողջության ապահովագրման ծառայության ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀԱՊՀ-ԳՀԾՁԲ-18/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին սույն որոշման մեջ նշված հիմնավորումների շրջանակներում Ընթացակարգի հրավերում կատարել համապատասխան փոփոխություններ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ